ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԸ ԴՐԵԶԴԵՆՈՒՄ

1981 թվականի օգոստոսի 16—26 օրերին Արևելյան Գերմանիայի Դրեզդեն քաղաքում գումարվել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Վարչության տարեկան ժողովը:

Սույն ժողովի մասին Վեհափառ Հայրապետին զեկուցագիր է ուղարկել Կենտրոնական Վարչության անդամ Տ. Շահե արքեպ. Անեմյանը: Այդ զեկուցագրից քաղվածաբար ներկայացնում ենք հետևյալ որոշ տեղեկությունները:

Ժողովը բացվել է ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրի ելույթով, որը ժողովականների ուշադրությանն է հանձնել մեր ժամանակի «ընկերային, քաղաքական և բարոյական այն հիվանդությունները, որոնք սպառնում են անձնական, ընկերային, ազգային և միջազգային կյանքին»:

Ժողովականներին ուղղված ընդհանուր քարտուղարի ելույթն ու կոչը մղել են ներկաներին օրակարգի վրա դրված հարցերը քննարկելու «պատասխանատվության ոգիով մը, առանձինն կամ միասնական ճիգերով բերելու համար Ավետարանին պատասխանը այսօրվան մեծ հարցերուն» (Զեկուցագիր):

Հարցերի բանաձևումը կատարել է ԵՀԽ-ի ընդհանուր ժողովը պատրաստող հատուկ հանձնախումբը:

Նախատեսվում է ԵՀԽ-ի ընդհանուր ժողովը գումարել 1983 թվականին Կանադայի Վանկուվեր քաղաքում:

Դրեզդենի վերոհիշյալ ժողովը զբաղվել է Վանկուվերում գումարվելիք ընդհանուր ժողովի նախապատրաստական աշխատանքներով: Ժողովականները սույն հանդիպման ժամանակ «քննարկեցին պարունակությունը առաջարկված հարցերուն, և բանաձևեցին չորս «գլխավոր մտահոգություններ» և տասը՝ «գործի առաջադրանքներ» (Զեկուցագիր):

Վանկուվերի ընդհանուր ժողովի բնաբանն է լինելու «Քրիստոս՝ տիեզերքի կյանքը»: Ժողովի «կենտրոնական գաղափարը կյանքի գաղափարն է, այսօրվան աշխարհի պայմաններուն մեջ» (Զեկուցագիր):

Դրեզդենի ժողովում բանաձևված չորս «մտահոգություններ»-ից առաջինը «կյանքի որակի հարցն է: Աստված է կյանքի աղբյուրը: Կյանքը մեզի շնորհված գանձ մրն է, որուն համար պարտինք մեր երախտագիտությունը հայտնել Աստուծո, ապրելով մեր կյանքը իր կամքին համաձայն»:

Երկրորդ մտահոգությունը՝ սպառնալիքներն են կյանքին:

Երրորդ մտահոգությունն է պայքար մղել ավելի լեցուն և ամբողջական կյանքի համար:

Չորրորդ մտահոգությունը համամարդկայնությունն է կյանքին: Մեր բաժանումներուն մեջ կջանանք միատեղել Եկեղեցիները, ազգերը, մշակույթները... Ինչպես ընել որ Եկեղեցիներ տան իրենց անդամներուն և դրացիներուն օրինակը և նախաճաշակը պատկանելության մարդկային ամբողջական ընտանիքին» (Զեկուցագիր):

Չորս մտահոգություններից բխած առաջադրանքները՝ ԵՀԽ-ի հանձնարարություններն են Կենտրոնական Վարչության կողմից, տրված Եկեղեցիներուն: Այդ հանձնարարությունները ամփոփում են ԵՀԽ-ին

առընթեր ստեղծված զանազան մարմինների կատարած ուսումնասիրությունները, գումարած ժողովները և կատարած աշխատանքները, վերջին հինգ տարիների ընթացքում:

Այդ հանձնարարություններն են.

1. **Բարի լուրը աղքատներին.** Եկեղեցիները ի՞նչ են անում իրական ձևով արտահայտելու համար իրենց համերաշխությունը աղքատին:

2. **Մկրտություն, պատարագ, ձեռնադրություն.** Այսինքն պետք է իրականացվի «մեկ մկրտություն» սկզբունքը: Կարելի լինի հաղորդությունը բաշխել բոլորին՝ առանց դավանական խտրության, ձեռնադրված հոգևորականը փոխադարձաբար ճանաչվի բոլոր Եկեղեցիների կողմից:

3. **Դավանություն միության մեջ.** Նոր ուղիներ որոնել արտահայտելու համար քրիստոնեական միությունը: Եկեղեցիների առաջ բացվել են նոր առիթներ, միասնաբար դավանելու իրենց հավատքը, ինչ որ արդյունքն է միության, որը տանում է դեպի մի նոր միություն:

4. **Էկումենիկ բաժանում հաստատությունների.** Պետք է խորտակել իշխողի և հայցողի միջև գոյություն ունեցող հարաբերության անիվը և ստեղծել նոր ձևեր Եկեղեցիների միջև, հիմնված արդար հանձանձումի սկզբունքի վրա:

5. **Պայքար խաղաղության համար, ատոմային այս դարում.** Եկեղեցիները կոչումը ունեն աշխատելու և ցուցաբերելու իրենց պատասխանատվությունը խաղաղության և զինաթափումի:

6. **Հետապնդում արդար և բաղձալի միընկերության կազմությանը:**

7. **Ցեղասպանություն.** Եկեղեցիները պետք է հակազդեն ցեղասպանության նոր դրսևորումների: Պայքարել ցեղասպանության դեմ և պահպանել արդարությունից և ազատությունից զրկված ազգերի իրավունքները:

8. **Կանանց և տղամարդկանց համայնությունը Եկեղեցուց ներս:**

9. **Եկեղեցին որպես ուսուցման, դաստիարակության դպրոց:**

10. **Քրիստոնեական հուսալի հաղորդակցություն.**

Եկեղեցիները պետք է հաղորդեն իրենց պատգամը այնպիսի ճանապարհներով, որոնք համապատասխանում են ավետարանական ոգուն:

Դրեզդենի ժողովը հրատարակել է նաև մի հայտարարություն, որը կոչ է անում հարյուր երկրների մեջ գործող Եկեղեցիներին, ի նպաստ գաղթականների, որպեսզի ամեն մարդ «իրավունք ունենա ապրելու իր ուզած երկրին մեջ, ձգելու զայն կամ վերադառնալու անոր»:

Մայր Աթոռի կողմից Դրեզդենի ժողովին մասնակցել են ԵՀԽ-ի Կենտրոնական Վարչության անդամ Տ. Շահե արքեպ. Աճեմյանը և Տ. Նորվան ծ. վրդ. Զաքարյանը՝ Փարիզից: